

**ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԵՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՈՑՄԻ ՏԱԿ¹**

Ներածություն

Լեզվական իրողությունների ուսումնասիրման գործում աստիճանաբար ավելի է մեծանում վիմագրության դերը: Հիմա արդեն կասկած չի հարուցում, որ միայն մատենագրական տվյալներով առաջնորդվելը չի կարող ապահովել լեզվական իրողության համակողմանի քննություն: Ավելին, վիմագրական տվյալները հաճախ անփոխարինելի տեղեկություններ են տալիս տվյալ իրողության տեղայնացման ու ժամանակագրության համար: Աճառյանի կոթողային աշխատանքներից հետո վիմական արձանագրությունների հրատարակությունը և դրանց ուսումնասիրությունը մեծ թափ են առել, որը հնարավորություն է տալիս սիստեմատիկաբար համալրելու մեր տվյալները հայերենի բառամթերքի վերաբերյալ և նորովի լուսաբանելու հնչյունական ու քերականական իրողությունները հայոց լեզվի պատմության զարգացման շղթայի համատեքստում՝ հաճախ վերականգնելով այդ շղթայի պակասող օղակները:

Վիմական արձանագրություններն անգնահատելի դեր են խաղում մասնավորապես բառաքնության բնագավառում, քանի որ նրանցում հանդիպում են բառեր, բառաձևեր, բառակապակցություններ կամ իմաստներ, որոնք վկայված չեն մատենագրության մեջ: Վաստակաշատ աղբյուրագետ Մելիք-Բախշյանին նվիրված այս ակնարկի § 1-ում կներկայացնեմ որոշ (հիմնականում՝ արդեն հայտնի, բայց մասնավոր հարցերում որոշ լուսաբանման կարիք ունեցող) օրինակներ, որոնց

¹ Այս հոդվածը մի մասն է կազմում գեկուցման, որ ներկայացվել է «Տեղանունից դեպի պատմություն» խորագրով գիտաժողովին՝ նվիրված Ստեփան Մելիք-Բախշյանի ծննդյան 90-ամյակին (ԵՊՀ, 2014, սեպտ. 26): Տեխնիկական աջակցության և լուսանկարների համար երախտապարտ եմ Ալետա Հակոբյանին, Ծովինար Մարտիրոսյանին, Կարեն Մաթևոսյանին, Աշոտ Մանասյանին և հատկապես Բեն Վարդանյանին:

դեպքում վիմագրական եզակի տվյալները հաստատվում են բարբառային նյութի օգնությամբ (*ակն ջաղաց, եռանդ(ն), միլ*), այնուհետև կքննեն *լարարար* եզակի բառը (§ 2), իսկ վերջում կփորձեն լուսաբանել *Բզաձոր* տեղանվան ծագումը՝ վիմագրական և բարբառային տվյալների լույսի տակ (§ 3):

1. Վիմագրական և բարբառային տվյալների համադրություն

1.1. *ակն ջաղաց*

Հայերեն *ակն* ‘աչք’ բառը մատենագրության մեջ և բարբառներում ձևեր է բերել բազմաթիվ իմաստներ՝ ‘փուս, ծակ’, ‘թոնրի անցք’, սայլի անիվ’ և այլն (ՀԱԲ 1, 106-109; Ամատունի 1912, 11a): Ըստ Աճառյանի (1913, 57)՝ որոշ բարբառներում այն վերաբերում է ոչ միայն սայլի կամ գութանի անիվին, այլև՝ ջրաղացի դրսի անիվին: Ջրաղացի առնչությամբ գործածությունը հաստատվում է վիմագրական հետևյալ տվյալներով:

Նորադուզի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարավային պատի կենտրոնի արձանագրության (1344 թ.) մեջ կարդում ենք.

կամակից եղէ շինութեան վանիցս եւ ետու իմ հալալ ընչիւք գնած ի Նորասուլաց ջրա վերայ :Ա: ակն ջաղաց ի ս Բ Գրիգորս (ԴիվՀայՎիմ 4, 1973, 21):

Ակն ջաղաց բառակապակցությունը վկայված է նաև Հայրավանքի եկեղեցու 1211 թ. մի արձանագրության մեջ (ԴիվՀայՎիմ 4, 1973, 69), Անիում՝ Տիգրան Հոնենցի հայտնի նվիրագրության (1215 թ.) մեջ և այլուր (Ավագյան 1978, 12, 96-99), նաև Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մեծիրանց վանքի արևմտյան եկեղեցու սրահից բացվող մուտքի կողքի արձանագրության (1293 թ.) մեջ՝ *զեղացա ակն* (ԴիվՀայՎիմ 5, 1982, 16):²

Այս բառակապակցությունը կարող է նշանակել ջրաղացի աղացներից մեկը (Ավագյան 1978, 96-99) կամ էլ, ինչպես բարբառային վերոհիշյալ տվյալի մեջ, ‘ջրաղացի

² Հայերեն *ջրաղաց* բաղադրությունը վկայված է 10-րդ դարից, իսկ *ջաղաց/ջ(ք)* ձևով (*ք*-ի անկմամբ) առատորեն գրանցված է միջին հայերենում ու բարբառներում (Աճառյան 1913, 935; ՀԱԲ 4, 119-120, 135b; ՄիջՀայԲառ 2009, 667): Հայերենի որոշ արևելյան ու հարավարևելյան բարբառներում՝ Արցախում և այլուր, *ջաղաց*-ը, Աճառյանի օրենքի համաձայն, դարձել է *ջաղաց/ջեղաց*, ապա, խլացման տեղաշարժ ունեցող բարբառներում, *ճաղաց/ճեղաց*: Մեծիրանց վանքի վերոհիշյալ *ջեղաց* տարբերակն արտացոլում է այդ հնչյունական զարգացման հին օղակը: Այս *ջեղաց* ձևը գտնում ենք նաև Արդանիշի մի խաչքարի արձանագրության (1216 թ.) և Հայրավանքի եկեղեցու արևելյան պատին՝ բեմի և խորանի արանքում փորագրված արձանագրության մեջ (ԴիվՀայՎիմ 4, 1973, 71, 382; Ավագյան 1973, 96; 1978, 127): Հնչյունական քննության շուրջ տես Ավագյան 1973, 94-96 և հատկապես Հ. Մուրադյան 1982, 106-109:

դրսի անիվը՝ Հիշենք նաև «Մասնա ծոեր» եպոսի՝ գավազցի Զարդար Տեր-Մխիթարյանի պատումը, որտեղ կոապաշտ թագավորը կոքերը դնում է *վըր ակներուն*, կարգադրում է, որ Սանասարին ու Բաղդասարին բերեն դնեն *հաճե՛վ ակներուն*, ինքն էլ ուզում է *ակ*-ով կտրել նրանց վիզն ու մատաղ աներ, սակայն եղբայրներն իրենք են *ակներ*-ով կտրում թագավորի վիզը:³

1.2. *Էռանդ* (գործ.՝ *Էռանդով*) / *Էռանդն* (գործ. *Էռանդամբ*)

Այս բառը հանդիպում է 13-րդ դ. երկու արձանագրություններում՝ Սանահնում (*գԳկուաշէն իւր Էռանդամբ*) և Բարձրաքաշում (*գԳարմիր քարն իւր ամէն Էռանդով*):⁴ Բարձրաքաշի արձանագրության համապատասխան հատվածը տես լուսանկ. 1: Սուրեն Ավագյանը⁵ քննադատում է բոլոր նախորդ մեկնաբանությունները և այս բառն իրավացիորեն նույնացնում Լոռվա և հարակից վայրերում գործածական *Էռանդ*՝ ‘սահման, արտերի սահմանը կազմող անջրպետ, թումբ’ բարբառային բառին: Նա, սակայն, չի հիշատակում Աճառյանի «Արմատական բառարանը» (ՀԱԲ 2, 32a), որտեղ գտնում ենք նույն մեկնությունը: «Արմատական»-ում տեղ գտած *Էռանդեամբ*-ը պետք է ուղղվի՝ *Էռանդամբ*:

1.3. *Միլ*

Հայերեն *միլ*՝ աղբյուրի կամ ջրամատակարարման խողովակաշար, ջրատար, ջրմուղ՝ բառը երկիցս վկայված է Անիում՝ Աբղարիբ Պահլավունու եկեղեցու 1036 թ. արձանագրության (*կանգնեցի միլ առ Սուրբ Փրկչիս*) և Տիգրան Հոնենցի հայտնի նվիրագրության (1215 թ.) մեջ (*ի քաղաքիս հայրենիք բաղնիսն ու միլն*):⁶

Սուրեն Ավագյանը (1978, 203-207) ներգրավում է Աճառյանին և մյուս հետազոտողներին անհայտ մնացած (բայց տես ստորև) տվյալներ և հանգամանալից քննությամբ ճշտում բառի իմաստը:⁷ Բացի վրացերեն *mili* ‘ջրատար խողովակ, ջրուղի’

³ Տես ՄԾ-Ա, 1936, 881-882. բառարանում՝ ՄԾ-Բ/2, 1951, 965b, բացատրվում է որպես ‘գործիք, անիվ’: Այս դրվագը որոշ չափով հիշեցնում է տարբեր ավանդույթներում հանդես եկող պատժիչ անիվը (տես Martirosyan 2010, 90):

⁴ Տես Ղաֆադարյան 1957, 130-131; ԴիվՀայՎիմ 9, 2012, 58-59, 367-368:

⁵ Ավագյան 1978, 78-79; տես նաև Պ. Մուրադյան 1979, 202b:

⁶ ԴիվՀայՎիմ 1, 1966, 45, 63:

⁷ Նույն իմաստը (‘ջրամատակարարման խողովակաշար, ջրատար, ջրմուղ’) արձանագրված է նաև ՄիջՀայԲառ 2009, 519a-ում, թեև այստեղ հիշատակված է միայն Տիգրան Հոնենցի արձանագրությունը:

բառից՝ նա վկայակոչում է նաև Թումանյանի ու Նոյեմբերյանի մի քանի խոսվածքներում գործածվող *միլ*՝ աղբյուրի խողովակաշար, ջրուղի, ջրատար, աղբյուրի վերգետնյա կառուցվածք՝ բառը (հմմտ. և Սանահինի երկու աղբյուրների անվանումները՝ *Վերի միլ* և *Ներքի միլ*), ինչպես նաև Օձունի խաչքարի⁸ արձանագրությունը (1228 թ.)՝ փորագրված ոմն Գունդեխի կողմից.

Ես՝ Գունդեխս իմ որաւքն (ի Մորաւքն՝) բերի զմիլս, շինեցի հոգետունս, կանգնեցի զխաչս վասն յերկար կենդանութեն ամիրսպասալար Շահնշահի եւ յիշատակ որդո իմո Կանանչին...

Արձանագրության համապատասխան հատվածը տես լուսանկ. 2:

Ավագյանն ընդգծում է, որ *ս* հոդը կարող է ծառայել որպես կողմնակի ապացույց, որ *միլ*-ն ու հոգետունը խաչքարից հեռու չէին, ուստի *զմիլս*-ը կարող է վերաբերել խաչքարի մոտի ներկայումս էլ գործող աղբյուրին: Բնութագրական է ջրուղի սարքելու՝ խողովակներով ջուր քաշելու համատեքստում *բերել* բայի գործածությունը, որի համար Ավագյանը հիշատակում է օրինակներ այլ արձանագրություններից՝ *բերաք զաղբիրանիս* (Թալին). *բերաք զջուրս* (Մղարթ):

«Արմատական բառարանում» Աճառյանի (ՀԱԲ 3, 321a) տեսադաշտում են եղել միայն Անիի արձանագրությունները, ուստի նա չի կարողացել ճշտել այս բառի կարգավիճակն ու իմաստը (հմմտ. նաև Ալիշան 1881, 88), թեև հիշատակում է Մառի ըստ էության ճիշտ մեկնությունը: Սակայն «Անձնանունների բառարանում» նա *Կանանչ* անձնանվան բառահոդվածում (ԱճառԱնձն Բ, 1944, 578-579) հիշատակում է Օձունի արձանագրությունը, որի բովանդակության նկարագրությունից («որ շինել է Լոռիի Օձուն գյուղի աղբյուրն ու ջրանցքը, ջուր է բերել, ինչպես և շինել մի հոգետուն՝ ի հիշատակ իր որդի Կանանչի, և Շահնշահ սպասալարի») երևում է, որ նա այստեղ ճիշտ է հասկացել *միլ* բառը: Այդպես է հասկացել նաև Աճառյանի հիշատակած աղբյուրը՝ Բժշկեանց 1830, 82, որն այս արձանագրության *զմիլս* բառը փակագծերում բացատրում է այսպես՝ «այսինքն ջրանցս»:


Հավանաբար նույն *միլ* բառն է արտացոլված *Մլեր* տեղանվան⁹ մեջ:

⁸ Խաչքարը գտնվում է Օձունի տաճարից փոքր-ինչ հյուսիս:

⁹ Այդ վայրը հիշատակված է Աբեղյան 1941, 23-ում (ծնթ. 1):

2. *Լարարար* բառի մեկնության փորձ

Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու մուտքի բարավորի վրայի արձանագրության մեջ (ԴիվձայՎիմ 1, 1966, 32^{Nr96}) գտնուում ենք *լարարար* բառը, որը գրանցված չէ ՆՀԲ-ում, ՀԱԲ-ում կամ ինձ մատչելի որևէ այլ բառարանում.



+ԵՍ ՍԱՐԳԻՍ ԼԱՐԱՐԱՐՍ ԵՏՈՒ ԶԻՍ ՏՈՒՆՍ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ, ՈՐ ԱՌՆԵՆ ԻՆԶ ԺԱՍ Ի ՏԱՐԻՆ :ԺԵ: ԱԻՐ, ԻՍԿ ՈՐ ՀԱԿԱՌ Գ՛Ա՛/ ԵԻ ԶԻՍ ՅԻՇԱՏԱԿՍ ԽԱՓԱՆԷ ՅԱՄԵՆԱ՛ԿԱԼ, ԲԱՆԷՆ ԱՅ՛.... ՀՈԳԻՈ՛Վ ԵԻ ՄԱՐՄՆՈՎ ԱՄԵՆ:

Ակնհայտ է, որ սա մասնագիտության անվանում է՝ կազմված *լար* և *-արար* բաղադրիչներից: Բայց կոնկրետ ի՞նչ մասնագիտության մասին է խոսքը: Այդ հարցի ելակետը, կարծում եմ, *լար* արմատի՝ «որմնադիրների չափի գործիք, ուղղալար» իմաստն է, որը գործածված է Ագաթանգեղոս § 758-ում (1909=1980, 393).

Եւ ինքն սուրբն Գրիգորիոս զլար ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ՝ գերանելեացն վկայարան հանգստարանացն զհիմունսն յօրինէր:¹⁰

«Saint Gregory himself took up **the architect's line** and set out the foundations for the saints' chapels of repose» (Thomson 1976, 297):

Բառն այս նշանակությամբ հանդիպում է նաև Աստվածաշնչում՝ տաճարի շինարարության համատեքստում. *և ի ձեռին նորա էր լար շինողաց, և ձող չափոյ* (Եզեկիել խ.3, տես Զօհրապեան 1805.3, 784): Հմմտ. նաև Յովբ լը. 4-5. *Ու ըր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի... ո՞վ արկ ի վերայ դորա լար* (Cox 2006, 241): Երկու դեպքում էլ հայերեն *լար* բառը համապատասխանում է հունարեն *σπαρτίον*՝ ‘measuring cord, plumb line’ բառին:

¹⁰ Ագաթանգեղոսի այս և Թովմա Արծրունու վկայությունների քնության շուրջ տես Բարխուդարյան 1963, 217-218:

Կարելի է եզրակացնել, որ **լարարար** բառը նշանակել է 'որմնադիր վարպետ, որ ստուգում է կառույցի ուղղահայացությունը':¹¹ Համապատասխան պատկեր գտնում ենք հայկական հետևյալ մանրանկարում.¹²



3. Վիմագրերի դերը տեղանունների ստուգաբանության մեջ

Պատմական Անին շրջապատող չորս ձորերից մեկը քաղաքի հյուսիսային կողմում գտնվող **Իգաձոր**-ն է (ՀայՏեղԲառ 2, 1988, 506a): Այս տեղանունը սովորաբար մեկնաբանվում է որպես *Այգեձոր* (տես օրինակ Ալիշան 1881, 39b): Սակայն Լեոն (1967, 200-201) գրում է. «Իգաձորը, ասում են, պիտի Այգեձոր նշանակած լինի: Բայց այգիներ կարո՞ղ էին լինել այստեղ: Շիրակի դաշտը ծառ առհասարակ չէ ընդունում: Իսկ Իգաձորը, բացի Շիրակի մի կտորը լինելուց այնպիսի չոր ու այրված տեղ է, ուր ոչ մի ծառ չէր էլ կարող արմատ բռնել: Լերկ հող է երևում ամեն տեղ, կարծես թե մանրած կավիճ է ցանված: Իսկ ձորի կողերը մոխրագույն ապառաժներ են»:

Լուսինե Պետրոսյանը (2001, 98-100), հետևելով Լեոյին, մերժում է *Իգաձոր*-ը *Այգեձոր*-ից ածանցող ստուգաբանությունը: Նա այդ տեղանվան առաջին բաղադրիչը նույնացնում է *էգ* բառին՝ այն դիտարկելով որպես Մայր դիցուհու մակդիրը:¹³

Այդ ստուգաբանությունը, ըստ իս, անհամոզիչ է: Այնքան էլ հավանական չէ, որ 'էգ' գաղափարը դիցուհու մակդիր դառնա: Մինչդեռ *Այգեձոր*-ը շատ սովորական անվանում է գյուղանունների համար (ՀայՏեղԲառ 1, 1986, 227), և *Այգեձոր* > *Իգաձոր* արտացոլումն անառարկելի է: Հայերեն *այգի* բառը բարբառներում հանդես է գալիս *էգի* և *իգի* տիպի արտացոլումներով՝ Արարատյան *իքի*, Թիֆլիս *իգի*, Ջուղա *իգի*, Վան *իկի*, Ագուլիս *էգի*, Մուշ *հէգի*, Ակն *էգի* և այլն:¹⁴ Բարդ բառերի կազմում *այգի*-ն հանդիպում է հիմնականում որպես *այգե*-, սակայն օրինակներ կան նաև *այգա*- տարբերակի

¹¹ Հմմտ. նաև *լարաչափ* «չափող լարի» (ՆՀԲ 1, 880a):

¹² Տես Գևորգյան 1973, XII.5 (6394, 71բ):

¹³ Տես նաև Ա. Պետրոսյան 2006a, 17, ծնթ. 4; 2006b, 71:

¹⁴ ՀԱԲ 1, 166b; Martirosyan 2010, 56:

գործածության. գրաբարում՝ *այգաւէտ* (Եսայի լգ. 17, var. lect.),¹⁵ միջին հայերենում՝ *այգածաղիկ*, *այգայտեղ*, *այգասկան*¹⁶ և Արարատյան բարբառում՝ *յիգաբան*՝ այգու վերաբերյալ բան ու գործ՝, *յիգաթաղ*՝ այգու որթերը ցրտից պաշտպանելու համար թաց հողով ծածկելու պահը՝ և *յիգաքաղ*՝ այգեկուր՝:¹⁷

Չայնավորային այդ արտացոլումները տեղ են գտել նաև վիմագրերում: Նորավանքի Սուրբ Կարապետ եկեղեցու գավթի արևմտյան պատին 1271 թ. փորագրված նվիրատվական արձանագրության մեջ հանդիպում է *իգին* (< *այգին*) ձևը, Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցու հյուսիսային պատին փորագրված արձանագրության մեջ (ՈԺԲ = 1163 թ.)՝ *էգոյն* (< *այգոյն*), իսկ Արջոառիճ հուշարձանի 13-րդ դ. մի վիմագրում՝ *եգեղէմ* < **այգ(ի)-ա-դէմ* բաղադրությունը (Ավագյան 1978, 72-74, 189, 269):

Վիմագրերը լրացուցիչ լույս են սփռում նաև հենց *Այգե/աձոր* տեղանվան, ինչպես նաև *Այգե/աձոր* / *Բգաձոր* տիպի տարբերակայնության վրա:

Հաղպատի վանքի 1179 թ. մի վիմագրում կարդում ենք (Ավագյան 1978, 73).

Եւ ետու զիմ հայրենիք այգին, որ առաջի Եգաձորո, ի գրատունս Զաղբատա:

Կա *Բգատակ* անվամբ մի գյուղատեղի Մարց գյուղից մոտ 5 կմ հարավ-արևելք, Մարց գետի ձորում. դրա հարավարևմտյան ծայրին պահպանվել են Մամիկոնյան իշխանների կողմից 1255 թ. կառուցված եկեղեցու և շինությունների ավերակներ, գերեզմաններ ու խաչքարեր: Տեղում հայտնաբերված՝ 1236 թ խաչքարի արձանագրության մեջ Բգատակ-ը անվանվում է *Ագաղակ* < **Այգատակ*:¹⁸ Այս *Ագաղակ*-ը հիշատակված է նաև Դսեղի Բարձրաքաշ վանքի ՈՂ=1241 թ. նվիրագրում (Ավագյան 1978, 73-74).

Ես՝ Գրիգոր, որդի Մարծպանա ... Ետու յիմ վանքս եւ զՍերեկագոմուց տափն եւ զմեծ կոռավարն յԱգաղակի, զՓայտաշինո կեսն ...

Արձանագրության համապատասխան հատվածը տես լուսանկ. 3:

Ուշագրավ է նաև Օձունի և Արդվիի մոտակայքի *Այգեհատ* գյուղի անվան *Բգահատ* տարբերակը:¹⁹ Այստեղ *հատ* արմատն ամենայն հավանականությամբ

¹⁵ Զօհրապեան 1805, 3, 380; ՆՀԲ 1, 79c:

¹⁶ ՀԱԲ 1, 166; ՄիջՀայԲառ 2009, 41a:

¹⁷ Ամատունի 1912, 498-499:

¹⁸ ՀայՏեղԲառ 2, 1988, 506b; 3, 1991, 745a; ԴիվՀայՎիմ 9, 2012, 414-415:

¹⁹ Տես Ղանալանյան 1969, 183, 397; ՀայՏեղԲառ 2, 1988, 25b: Հմմտ նաև Ավագյան 1973, 89 և 1978, 249՝ *Այգհատ*:


հանդես է գալիս իր ‘այգու սահման’ իմաստով, հմմտ. Հերիերի Աստվածածին եկեղեցու հարավային պատի ՉԼԱ=1283 թ. արձանագրությունը (Ավագյան 1978, 187-188).

Եւ ետուն ... նուէրս ի Ս. ուխտս զՔարաթաղին այգին վերին հատովն.

Վերջին՝ ընդգծված մասը նշանակում է «այգին վերին սահմանով»:


Այս ամենը գրեթե կասկած չի թողնում, որ Անիի **Բգաձոր**-ը պարզապես արտացոլում է **Այգե/աձոր**-ը: Միակ առարկությունը, թե դա չորային տարածք է ու հազիվ թե ծառեր կամ այգի ունեցած լինի, բավական չէ այս թափանցիկ մեկնությունը ժխտելու համար: Մի քանի դար առաջ այս տարածքը կարող էր բնակլիմայական այլ պայմաններ ունենալ: Ուշագրավ է, որ նրան միացող ձորը, որ նույնպես բուսականությունից զուրկ կամ աղքատ է (տես լուսանկ. 4a-c), հայտնի է *Ծաղկոցաձոր* խոստուն անվամբ:²⁰ Իհարկե, ցանկալի կլիներ այս տարածքի ավելի հանգամանալից ուսումնասիրությունը: Այդուհանդերձ այս փուլում էլ կարելի է արձանագրել, որ **Բգաձոր**-ն իսկապես սերում է **Այգե/աձոր**-ից, և նրա դիցաբանական ստուգաբանությունն անհավանական է, եթե չասենք՝ լիովին հիմնազուրկ:

Լուսանկարներ




1. Բարձրաքաշի վանքի արձանագրությունը (*էռանդով*)

²⁰ Բգաձորի և Ծաղկոցաձորի մասին տես Ալիշան 1881, 36-39, 87-91; ՀայՏեղԲառ 2, 1988, 506a, 838c:



2. Օձունի խաչքարի արձանագրությունը (զմիշ)



3. Բարձրաքաշի վանքի արձանագրությունը (յԱգադակի)

(1-3 լուսանկարները՝ Հայագիտական արշավային դաւընթաց 2014, Ալէտա Հակոբյան և Ծովինար Մարտիրոսյան)



4a-b. Իգաձորի շարունակությունը՝ Ծաղկոցաձոր (լուսանկ.՝ Կարեն Մաթևոսյանի, 2012-ի օգոստոս)



4c. Իգաձորի և Ծաղկոցաձորի հատման տեղը (լուսանկ.՝ Աշոտ Մանասյանի, 2013-ի սեպտեմբեր)

LEXICOLOGICAL AND ETYMOLOGICAL OBSERVATIONS UNDER THE LIGHT OF INSCRIPTIONAL DIALECTAL DATA

Hrach Martirosyan

Armenian literature covers a broad spectrum of literary genres, including historiography, biography, martyrology, hagiography (lives of the saints), discourse, romance, legend, hymn, epic, and heroic verse. Since the Classical and post-Classical periods we find a huge number of valuable works on, inter alia, philosophy, linguistics, rhetoric, geography, astronomy, calendar, and mathematics. Beside the literary texts, there is a huge number of inscriptions and colophons which are indispensable for the study of the history of Armenian language and culture, especially because they are original documents (unlike the “normal” texts which mainly survived through copies often written many centuries after their composition), and they frequently comprise issues of everyday life as well as linguistic forms peculiar to the vernacular.

In this paper I shall discuss:

1. a few forms that are only or mainly attested in inscriptions and are confirmed by dialectal data (*akn̄jałac* ‘a millstone’, *erand(n)* ‘border between fields’, and *mil* ‘water pipe, aqueduct’);
2. the hapax *lararar* ‘who measures with a plumb-line’;
3. etymology of the place name *Igajor*.

Գրականություն

Աբեղյան Մանուկ

- 1941 «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ. Երևան. ԱրմՖԱՆ-ի հրատարակչություն:

Ազաթանգեղոս

- 1909=1980 *Պատմություն Հայոց* (աշխատ.՝ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց). Տիփլիս. Արագասիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1909: A facsimile reproduction with an introduction by R. W. Thomson: Delmar, New York: Caravan Books, 1980:

Ալիշան, Ղևոնդ

- 1881 Շիրակ. տեղագրություն պատկերացոյց. Վենետիկ. Ս. Ղազար:

Աճառեան Հ

- 1913 Հայերէն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Թ):
- 1942-62 Հայոց անձնանունների բառարան [ԱճառԱնձն 1-5]. 1, 1942; 2, 1944; 3, 1946; 4, 1948; 5, 1962. Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն [1-4 հատորները = *Գիտական աշխատություններ* 21, 24, 25, 26]:
- 1971-79 (ՀԱԲ), Հայերէն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:

Ամատունի Սահակ վարդապետ

- 1912 Հայոց բառ ու բան. Վաղարշապատ:

Ավագյան Սուրեն Արտեմի

- 1973 Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (X-XIV դդ). Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

1978 Վիմական արձանագրությունների բառաքնություն.

Երևանի համալսարանի հրատարակչություն:

Բարխուդարյան Սեդրակ Գ.

1963 Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ. Երևան.
Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Բժշկեանց Մինաս

1830 Ճանապարհորդություն 'ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս 'ի
Հայկականց սերելոց 'ի նախնեաց Անի քաղաքին. Վենետիկ. Սուրբ Ղազար:

Գևորգյան Աստղիկ

1973 Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում (The crafts and
mode of life in Armenian miniatures). Երևան. «Հայաստան»:

ԴիվՀայՎիմ 1-9

1960-12 Դիվան հայ վիմագրության (Corpus inscriptionum armenicarum). 1, 1966 (*Հ. Մ. Օրբելի*, Անի քաղաք). 2, 1960 (*Մ. Գ. Բարխուդարյան*, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ). 3, 1967 (*Մ. Գ. Բարխուդարյան*, Վայոց ձոր՝ Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ). 4, 1973 (*Մ. Գ. Բարխուդարյան*, Գեղարքունիք՝ Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ). 5, 1982 (*Մ. Գ. Բարխուդարյան*, Արցախ). 6, 1977 (*Սուրեն Ավագյան, Հռիփսիմե Ջանփոլադյան*, Իջևանի շրջան). Երևան. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 7, 1996 (*Մ. Գ. Գրիգորյան*, Ուկրաինա, Մոլդովա). 8, 1999 (*Մ. Գ. Գրիգորյան*, Ռուսաստանի Դաշնություն). 9, 2012 (*Մ. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղունյան*, Լոռու մարզ). Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Զօհրապեան Յովհաննէս

1805, 1-4 Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց (4 հատորով).
Վենետիկ. Ս. Ղազար:

Լեո

1963 Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը. Երևանի
համալսարանի հրատարակչություն:

ՀԱԲ 1-4

1971-79 տես Աճառյան

ՀայՏեղԲառ 1-5

1986-2001 *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հտ. 1, 1986; հտ. 2, 1988; հտ. 3, 1991; հտ. 4, 1998; հտ. 5, 2001. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Ղանալանյան, Արամ Տիգրանի

1969 Ավանդապատում. Երևան. ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն:

Ղաֆադարյան Կարո

1957 Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. Երևան. ՀՍՄՌ ԳԱ հրատարակչություն:

ՄիջՀայԲառ 1-2

2009 *Ռ. Ս. Ղազարյան և Հ. Ս. Ավետիսյան*, Միջին հայերենի բառարան (2-րդ բարեփոխված հրատարակություն). Երևանի համալսարանի հրատարակչություն:

Մուրադյան Հ. Դ.

1982 Հայոց լեզվի պատմական քերականություն. հտ. 1, Հնչյունաբանություն. Երևան. ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն:

Մուրադյան Պարույր Մ.

1979 *Ավագյան 1978*-ի գրախոսական. *ԲԵՀ* 1979, № 2. 201-204:

ՆՀԲ 1-2

1979-81 *Գ. Աւետիքեան, Խ. Միրմէշեան, Մ. Աւգերեան*, Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Վենետիկ. Սուրբ Ղազար, 1836-1837. 2-րդ հրատ. Երևանի համալսարանի հրատարակչություն:

Պետրոսյան Արմեն

2006a Հայոց ազգածագման հարցեր. Երևան. «Նորավանք» ԳԿՀ:

2006b Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր. Երևան. «Վան Արյան»:

Պետրոսյան Լուսինե

2001 Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում. *Գիտական աշխատություններ*. Գյումրի. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն. հտ. 4. 97-101:

ՄԾ-Ա, Բ/1-2, Գ, Դ

- 1936- Սասնա ծռեր. իմբ. Մ. Աբեղյան և Կ. Մելիք-Օհանջանյան (հտ. Ա, 1936; Բ 1-2, 1944 և 1951), Երևան. Պետական հրատարակչություն; իմբ. Ս. Հարությունյան և Ա. Սահակյան (հտ. Գ, 1979; Դ, 1999), Երևան. ՀՍՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) հրատարակչություն:

Cox Claude E.

- 2006 Armenian Job: reconstructed Greek text, critical edition of the Armenian with English translation. Leuven – Paris – Dudley, MA: Peeters. (Hebrew University Armenian studies, 8).

Martirosyan Hrach K.

- 2010 Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).

Thomson R. W.

- 1976 *Agathangelos*, History of the Armenians (Armenian text and English translation on facing pages; “The Teaching of St. Gregory” is omitted; with introduction and commentary). Albany, NY: State University of New York Press.